

**ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԴՈՂՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԸ ԱՅՍՈՒՀԵՏ՝
ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՄՐՑՈՒՅԹ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՏԱՐ ՄԱՍՆԱԳԵՏԻ
/ԾԱԾԿԱԳԻՐ՝ 3.1-1/ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ**

Առաջատար մասնագետը աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ օրենքով սահմանված կարգով իրականացնում է հողի հարկի և գույքահարկի գանձումը, աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ մասնակցում է համայնքի հողերի գոտիավորման և օգտագործման սխեմայի կազմման աշխատանքներին, աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ մասնակցում է ինքնակամ հողագավթման կանխման, կասեցման և դրանց հետևանքների վերացման աշխատանքներին, աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ մասնակցում է սահմանված կարգով հողային հաշվեկշռի կազմման աշխատանքներին: Իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ: Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

- _ միջնակարգ կրթություն
- _ սույն պաշտոնի անձնագրի 10-րդ կետի բ. ենթակետում նշված իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն,
- _ համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար հայտարարված մրցույթը կկայանան 2012 թվականի նոյեմբերի 20-ին՝ ժամը 14:00-ին՝ Դոդսի գյուղապետարանում, որը գտնվում է մշակույթի տան շենքում / հասցե՝ գ.Դոդս, Բաղրամյան 1-ին նրբանցք 6/:

Դիմող ՀՀ քաղաքացիները Դոդսի գյուղապետարանի աշխատակազմ կամ ՀՀ Արմավիրի մարզպետարան պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.

- _ դիմում մրցույթային հանձնաժողովի անունով / ձևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս/

_ տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի պատճենները բնօրինակների հետ միասին,

_ հայտարարություն այն մասին, որ ինքը չի տառապում ՀՀ կառավարության 2005 թվականի մարտի 3-ի N 310 –Ն որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված հիվանդություններից որևէ մեկով,

_ հայտարարություն այն մասին, որ ինքը դատական կարգով չի ճանաչվել անգործունակ կամ սահմանափակ գործունակ,

_ արական սեռի անձիք զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր գորակոչային տեղամասային կցագրման վկայականի պատչենները,

_ մեկ լուսանկար 3×4 չափսի,

_ անձնագրի պատճեն:

Մրցույթին մասնակցել ցանկացող ՀՀ քաղաքացիները լրացուցիչ տեղեկություններ ստանալու ինչպես նաև պաշտոնի անձնագրին և հարցաշարին ծանոթանալու համար կարող են դիմել ՀՀ Արմավիրի մարզի Դոդսի գյուղապետարան / հեռ՝ . 077-62-42-62/, ՀՀ

Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչություն /
հասցե՝ քաղ. Արմավիր, Աբովյան 71, հեռ.՝ 0237-2-07-70, - 2-76-49/:

Փաստաթղթերը ընդունվում են ամեն օր ժամը 10:00-ից 16:00, բացի շաբաթ և կիրակի
օրերից:

Դիմումների ընդունման վերջնաժամկետն է՝ 06-ը նոյեմբերի 2012 թվական:

Գ. Դոդո
2012 հոկտեմբերի 18